600.0056.24.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2021 թվականի №56Ա
ք. Երևան

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի դեկտեմբերի 24-ի №2/9-100 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Աշտարակի հատվածի E691 և M1 ավտոճանապարհի երկայնքով զուգահեռ տեղադրված «Անուշ-Բջնի» 110 կՎ լարման բարձրավոլտ երկշղթա օդային գծի վեց հենարանները, օպտիկական մալուխ անցկացնելու նպատակով, «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը (վերջինիս անունից հանդես կգա «Ռեդինետ» փակ բաժնետիրական ընկերությունը) (այսուհետ՝ Օգտագործող) օգտագործման հանձնելուն համաձայնություն տալու խնդրանքով,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով, 2021 թվականի հունվարի 15-ի № ԳԲ/34.1-Մ2-2/77-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 11-ի №02/12.8/3487-2021 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի առնչությամբ առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Աշտարակի հատվածի E691 և M1 ավտոճանապարհի երկայնքով զուգահեռ տեղադրված «Անուշ-Բջնի» 110 կՎ լարման բարձրավոլտ երկշղթա օդային գծի վեց հենարանները «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (վերջինիս անունից կարող է հանդես գալ «Ռեդինետ» փակ բաժնետիրական ընկերությունը) օգտագործմանը հանձնելու Գործարքին, պայմանով, որ Ընկերությունը Օգտագործողի հետ պայմանագրային իրավահարաբերությունների շրջանակում ապահովի, որ՝

1) Օգտագործողը Գործարքի առարկա հանդիսացող գույքն օգտագործի և տիրապետի օպտիկական մալուխ անցկացնելու նպատակով և որևէ կերպ Օգտագործողի կողմից չօգտագործվի էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար,

2) Օգտագործողի կողմից Գործարքի առարկա հանդիսացող գույքի օգտագործումը որևէ կերպ չխոչընդոտի Ընկերության կողմից իրականացվող էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության առաջնային և պատշաճ իրականացմանը,

3) Օգտագործողը պարտավորվի ապահովել Գործարքի առարկա հանդիսացող գույքի ապահով ծանրաբեռնվածությունը, անվտանգության նորմերը և այլ սահմանված կանոնները:

2. Ընդունել ի գիտություն, որ Գործարքի գործողության ընթացքում, օրենսդրության և էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիայի շրջանակում, էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության, այդ

թվում՝ հաղորդման ցանցի կառուցման (վերակառուցման), շահագործման և սպասարկման գործառույթների պատշաճ իրականացման պարտավորությունը և պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը,

2) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել դրա վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
24 փետրվարի 2021թ.